

ԼԵՎՈՆ ՋԱԽՎԵՐԴՅԱՆ

Լևոն Հովհաննեսի Հախվերդյանը 1956 թ. մինչև մահկանացուն կնքելը իր ճակատագիրը կասել էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Հետ՝ 1965–1986 թթ. որպես թատրոնի բաժնի վարիչ, իսկ 1987–2003 թթ. որպես տնօրեն, այս պաշտոնում վոխարինելով ինստիտուտի հիմնադիր երջանկահիշատակ ակադեմիկոս Ռուբեն Զարյանին: 1996-ից նա ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս էր:



Լևոն Հախվերդյանն ուներ բուռն ու կարեկլից բնավորություն: Նա բուռն էր ոչ միայն որպես գիտնական, այլև որպես հրապարակախոս և որպես պարզասլես հայ քաղաքացի: Առաջին իսկ հրապարակումով («Արա Գեղեցիկը» Լենինականի պետական թատրոնում), – «Գրական թերթ», 1946) նա որոշեց իր հետաքրքրությունների գլխավոր բնագավառները՝ գրականություն և թատրոն: Հախվերդյանի գլխավոր աշխատություններից մեկը՝ «Թուժանյանի աշխարհը» (1966), նվիրված է գրականությանը, մյուսը՝ «Հայ թատրոնի պատմություն. 1901–1920» (1980), թատրոնին:

Հախվերդյանը 30-ից ավելի գրքերի և հարյուրավոր հոդվածների հեղինակ է: Նրա առաջին իսկ

գրքերը («Մեր օրերի հայ դրամատուրգիան», 1955, «Սուրեն Քոչարյանի արվեստը», 1959) արվեստի և գրականության աշխարհում արժանացել են մեծանուն մարդկանց՝ Ռուբեն Զարյանի և Գուրգեն Մահարու ուշադրությունը: Մահարու դիպուկ խոսքը՝ «...Լ. Հախվերդյանին հաջողվել է իր ընթերցողին դարձնել Սուրեն Քոչարյանի գրական համերգների հանդիսատեսն ու դիտողը...» («Գրական թերթ», 20 նոյեմբերի 1959), բնորոշ է նրա գրական-արվեստագիտական ամբողջ գործունեությանը:

Հայրենական մեծ պատերազմից հետո գրականության և արվեստի աշխարհ մտավ եռանդուն ու խանդավառ մի երիտասարդություն (Ս. Աղաբաբյան, Հր. Թամրազյան, Ս. Սարինյան, Հ. Սալախյան), որի փայլուն ներկայացուցիչն էր Լ. Հախվերդյանը. նրանց հուզում էին նոր և նորագույն գրականության հրատապ բոլոր հարցերը: Թատերագիտության ասպարե-

զուգում Ռուբեն Զարյանի գլխավորությամբ գործում էր նույնպիսի ակտիվ մի սերունդ՝ Ս. Ռիզակ, Բ. Հարությունյան, Լ. Խալաթյան, նրանցից ավելի երիտասարդ՝ Հ. Հովհաննիսյան: Այստեղ էլ աչքի էր ընկնում Լ. Հախվերդյանը: «Սուրեն Քոչարյանի արվեստը» եղավ ասմունքի արվեստի սահմանները ճանաչող և բարձր ոգով ներշնչված մի ներքող նվիրված այգ եզակի ասմունքողին: Մի դերասանի թատրոնում հանձինս Ս. Քոչարյանի, բազմաձայնության ու բազմակերպարայնության բացահայտումը Լ. Հախվերդյանի ծառայությունն էր: Այս վաղ մենագրությունը, որտեղ ներկայացված են Քոչարյանի հայերեն արտասանության օրինակները, հասնում է տեսական մակարդակի մի կողմից ելնելով դեղարվեստական երկի յուրահատկությունից, մյուս կողմից՝ ասմունքողի գիկցիայի, առողանություն, դիմախաղի ու ժեստիկուլյացիայի հնարներից, ի վերջո դրական երկում ու Քոչարյանի բանավոր խոսքում՝ բուն արևելահայերեն դրական լեզվի ու բարբառների հատկանիշներից: Նույնիսկ Քոչարյանին չլսած ասմունքողն այս գրքից կարող է պիտանի շատ դասեր ստանալ: Դա նրանից է, որ ինչպես Ա. Քոչարյանը հիանալի գիտեր Լոռու և Թիֆլիսի կենցաղն ու մարդկանց, այդպես էլ դրանք քաջ գիտեր Լ. Հախվերդյանը, որն իր կենդանի հարուստ գիտելիքների ու դիտողականության զինանոցը գործադրում էր վերհանելու Քոչարյան ասմունքողի արվեստի հմայքը:

Լ. Հախվերդյանի պաշտամունքը հայ դրականության մեջ Հովհաննես Թումանյանն էր: Դա երևում է «Թումանյանի աշխարհը» մենագրության մեջ, որի երևան դալը պայմանավորված էր նրա անմնացորդ պաշտամունքով ազգային հանճարի նկատմամբ՝ ոչ միայն բանաստեղծի ու արձակագրի, այլ առաջին հերթին բարոյական կերպարի, պոետի հումանիստական ու ազգային փիլիսոփայության, որպես քաղաքացու կերպարի նկատմամբ: Թումանյանի վսեմ ու փխրուն մարդկային կերպարը թատերագետ-դրականագետին ուղեկցել է ամբողջ կյանքում, հատկապես նրա կրքոտ հրապարակախոսության մեջ: Այն միշտ Հախվերդյանի համար եղել է բանալի հասկանալու համար Հայաստանի անկախության շրջանի կյանքում տեղի ունեցող ցավագին ու երբեմն գոյության սահմանի վրա ճոճվող իրարամերժ վտանգավոր շարժումները: Նույնիսկ Թումանյանի տիեզերական-ազգային ողբերգությունը Հախվերդյանը դարձրել էր իր սեփական-անձնական ողբերգությունը: «Թումանյանը ժողովրդի զոհասեղանին դրեց և՛ կյանքը, և՛ հանճարը», - դրում էր նա: Նա փայլուն գիտակցում էր հզոր տերությունների վտանգավոր խաղը ամենահզոր, թեկուզ տոտալիտար երկրի դեմ, որ զարհուրելի հետևանքներով ու զոհաբերումներով էր հղի հենց հայ ժողովրդի համար, և հայոց փրկությունը կապում էր այսօրվա Ռուսաստանի հետ, ինչպես Թումանյանն իր ժամանակին: Միլիոնից ավելի հայերի արտագաղթը և երկրաշարժի ու պատերազմի զոհերը այգ դավադիր խաղի աղետալի հետևանքներն էին: Իմաստուն բանաստեղծները աստվածատուր են և հազվագեպ՝ նույնիսկ մեծ ժողովուրդների կյանքում: Մեր ժողովրդի համար, իր կյանքի ամենաճակատագրական պահերից մեկում, Թումանյանն այն աստվածային պարզևն էր, որի ետևից դնում էր Լևոն Հախվերդյանը, իր կարողության չափով, նոր ժամանակների խնդիրների բովում, բայց միշտ, մինչև վերջին շունչը հավատարիմ: Թումանյա-

նի արվեստի ու սլավոփրանների պաշտպանության ու վերարծարծման վերջին փորձը «Թուժմանյանը և հայոց պատմական ճակատագիրը» դիրքն էր. որ նաև յուրահատուկ ավանդ էր իր հասակակից, իրենից կրասեր կոլեգաներին, ի վերջո՝ իր ժողովրդին: Եվ զարմանալի չէ, որ այն լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և ինստիտուտի տնօրեն Լ. Բարսեղյանի խմբագրությամբ: Դա, կարելի է ասել, Հախվերդյանի նվիրական գիրքն է, մի հոյակապ անթոլոգիա՝ նվիրված Թուժմանյանի այսօր էլ այժմեական խորհրդածուծներին հայոց պատմական ճակատագրի մասին:

Լ. Հախվերդյանի մի մեծ մտահոգությունը կասկած էր հայոց լեզվի հետ: 1982 թ. անվանի լեզվաբան Մ. Ասատրյանի խմբագրությամբ լույս տեսած «Ջրուլյցներ լեզվի մասին» հանրամատչելի գրքույկն ուղղված էր հայ պատանիներին: Իր մատչելիությունը, համակողմանիությունը և գրավիչությունը «Ջրուլյցները» մեծ ընդունելության արժանացան և ուսսագիր շատ հեղինակների մղեցին գրելու նաև հայերեն:

Անշուշտ, թատրոնը Հախվերդյանի գործունեության կարևորագույն մասն է, այն կենսական մասը, որով նա բյուրավոր երակներով կապված էր իր ինստիտուտի հետ, որտեղ ուրպես տնօրեն պահպանեց Ռուբեն Զարյանի ավանգները: Հախվերդյանը խորապես գիտեր և ուսումնասիրել էր և՛ հայ թատրոնը, և՛ հայ դրամատուրգիան: Նա միշտ աշխատել է հասկանալ նյութը և հասկանալ, թե ինչն է պակասում, որ այն գեղարվեստական որակ ստանա: Այդպիսի փորձաքար եղավ նրա համար հետպատերազմյան դրամատուրգիային նվիրված իր առաջին գիրքը (1955 թ.): Հաճախ դիտարկելով «անկոնֆլիկտային» գորչ պիեսներ, նա գտնում էր այն հաջողություն պատճառները, որոնք երբեմն դրանք ունենում էին: Քննադատական իր նշտարով նա անջատում էր կենդանի և անկենդան կերպարները, կենդանի ու «մեռած» խոսքը, դիալոգը, «թեգերը», այսինքն այն, ինչ բխում էր ապրված կյանքից, և այն, ինչ առհասարակ մեռելածին էր:

Թատերագիտության ասպարեզում Լ. Հախվերդյանի ամենածավալուն ուսումնասիրությունը «Հայ թատրոնի պատմությունն. 1901–1920» է, որը ժամանակագրական առումով շարունակությունն է Հ. Հովհաննիսյանի նույնպիսի մոնոմենտալ ուսումնասիրության («Հայ թատրոնի պատմությունն. XIX դ.», 1996): Դա XX դարասկզբի հայ թատրոնի հոյակապ համայնապատկերն է՝ իր ապշեցուցիչ ոճական և մշակութային, նույնիսկ «բազմակացութային» հարստությամբ (անգամ մի դերասանի ռեպերտուարի չըջանակներում):

Լ. Հախվերդյանը, ինչպես որ ուներ իր սիրելի բանաստեղծները (Թուժմանյան, Իսահակյան, Զարենց, Մահարի, Սևակ), որոնց անդրադառնում էր ամբողջ կյանքում, նույնպիսի նախասիրություններ ուներ նաև թատրոնում: Ամենամեծը, թերևս, Վարդան Աճեմյանն էր, բեմի այդ կախարհը, որը, լինելով բեմադրող, հազվադեպ էր բեմում երևում: Ինչպես ամբողջ կյանքում իր ողջ ավյունով Հախվերդյանը ձգտում էր սերմանել ժողովրդի մեջ Թուժմանյանի հանճարն ու իմաստությունը կա՛մ նրա աշխարհի ուսումնասիրությամբ, կա՛մ նրա կենսագրությամբ, կա՛մ նրա մասին մեծերի հուշերով, կա՛մ նրա անթոլոգիայով, այդպես էլ ամբողջ կյանքում պրոպա-

գանդել է Վարդան Աճեմյանին, իբրև բեմադրող, իբրև մարդ («Բեմադրիչներ և բեմադրություններ», 1983, «Տաղանդ և բնավորություն», 1989, «Վարդան Աճեմյանը ժամանակակիցների հուշերում», 1997):

Լ. Հախվերդյանը, չնայած իր տարիքին (ծնվել է 1924 թ.), վերջին տասնամյակի տաղանդավոր հրասպարակախոսներից էր: Այստեղ էլ նրա ապրված ու սրտացավ տողերի արանքից հառնում է թուժանյանը իր ցավով և լոռեցու նուրբ հումորով: Եվ նա խոսում է միայն այն բաններից, որոնք հասկացել է և որոնք վերլուծում է հրապարակախոսի կրքոտ գրչով և բաբախուն սրտով: Մի քանի հոդվածներ (օրինակ, «Հայ ես դու, Հայ եմ ես, վայ քո ցավը տանեմ ես») գրեթե հասնում են թուժանյանի «Երկաթուղին» սլափածաձևի որակին նուրբ հումորով, հայոց Բեյրութ (Սփյուռք) և Երևան (Հայրենիք) «մայրաքաղաքների» բարքերի գրոտեսկային համեմատություններով, որ սուր մտքի և դիտողականության արդյունք են: Հախվերդյանի հրապարակախոսական հոդվածները, նույնիսկ նրա դրույթներին հավանություն չտալու դեպքում, վարակում են ասելիքի ստուգությունով, համակողմանի վերլուծության ձգտումով՝ խոսքը վերաբերի ազգային գաղափարին, թե մութ և ցուրտ տարիներին ամանորյա տոնածառ դնելու արարողությանը:

Մեր խոսքը եղրափակենք Հախվերդյանի, որպես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի, բարոյական նկարագրով, ընդ որում «բարոյական» ոչ թե քաղքենիական տափակ, այլ բարձր՝ «ինքնաղոհաբեման» իմաստով: Մենք, գիտաշխատողներս, գիտենք, թե վերջին տասնամյակ տարին որքան աննպաստ էր գիտությունը զբաղվելու համար ազգային ակադեմիայի գիտական ինստիտուտներում, ինչ գերլարված պայքար է ընթացել գիտական պլանների նոր, հետխորհրդային համակարգում գիտաշխատողներին թեկուզ նվազագույն աշխատավարձով պահելու համար (դրա ծիծաղելի նվաստացուցիչ չափը և աղետալի հետևանքները՝ այսինքն ավագ և միջին սերնդի մեծ թվով գործուն գիտնականների ֆիզիկական աննախանձելի վախճանը քաջ Հայտնի է): Այդ ընթացքում Հախվերդյանը եղել է նույնպես լայնահայաց ու հանդուրժող, որքան իր նախորդը՝ Ռուբեն Զարյանը ավելի նվաստավոր պայմաններում: Նրան ուրախացրել է իր տնօրինության տարիներին լույս տեսած յուրաքանչյուր գրքային միավոր՝ տպված ինստիտուտի և անձամբ իր կապերի շնորհիվ, թե հենց գիտնականների ջանքերով հայթայթված հովանավորություն: Ընդ որում, նա միշտ հարգանքով է վերաբերվել յուրաքանչյուր գիտաշխատողի, երիտասարդ, թե տարեց, իր հայացքները կիսող, թե ոչ. նրան հուզել և ուրախացրել է հենց գիտական ուսումնասիրության իրականացման ակտը, լինի դա թորոս Ռոսլինին նվիրված, թե ժողովրդական բանահյուսություն, լինի մենագրություն, թե գիտական ժողովածու, գիտաժողով, թե որևէ մեծանուն գիտնականի հիշատակին նվիրված գիտական ղեկուցումների ցերեկույթ: Այն ժամանակ, երբ տնօրենի կաբինետում սառչում էր խմելու ջուրը, ձեռնոցներ հագած դրում էր իր վերջին գրքերը և հրապարակախոսական հոդվածները՝ օրինակ ծառայելով իր դործընկերներին: Նրա օրոք արվեստի ինստիտուտում ստեղծված գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդը դոկտորական և թեկնածուական աստիճաններ է

շնորհել պատշաճ գիտական աշխատությունների համար թատրոնի, կերպարվեստի և երաժշտության բնագավառներում: Մինչև իր ծանր հիվանդությունը Լևոն Հախվերդյանը գրեթե միշտ վերջինն էր դուրս գալիս ինստիտուտից, որ իր երկրորդ ընտանիքն էր, թերևս իր համար ավելի կարևոր:

Նրա հիշատակը միշտ վառ կմնա գործընկերների, արվեստակիցների և իր ըյուրավորը ընթերցողների սրտերում, թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում:

ՎԻԳԵՆ ԴԱԶԱՐՅԱՆ